

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՆՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**

Նունվարի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Նոգևոր Ճեմարանում փեղի ունեցավ ծայրագույն վարդապետական թեզի պաշտպանություն: Մայր Աթոռի միաբան Ս. Վահան վարդապետ Նավհաննիսյանի «Պարականոն գրքերը Նոր Կտակարանի թարգմանության մեջ և «Գ. Կորնթացիք»-ը» թեմայով աշխատությունն արժանացավ քննիչ հանձնաժողովի դրական գնահատականին:

Նունվարի 28-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Ս. Խաժակ արքեպս. Պարսամյանի, փեղի ունեցավ Ս. Վահան վրդ. Նավհաննիսյանի՝ ծայրագույն վարդապետության ասպիճանի փվչության արարողությունը:

**ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ**



Տ. ՎԱՆԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1963 թ. նոյեմբերի 13-ին Իրաքի մայրաքաղաք Բաղդադում:

1967-1974 թթ. սովորել է Բաղդադի հայ կաթոլիկ նախակրթարանում:

1974-1980 թթ. սովորել է Կեդի Նիրամիայի պեպրական երկրորդային վարժարանում:

1980-1985 թթ. ուսանել է Բաղդադի համալսարանի էլեկտրական երկրաչափության ֆակուլտետում:

1986-1989 թթ. ուսանել է Նյու Յորքի Սուրբ Վլադիմիր օրթոդոքս ճեմարանում, որն ավարտելով՝ ստացել է Աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

1988 թ., ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ավագ արքեպս. Ասապուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1989 թ. հովվական մատակարար է եղել Նյու Յորքի Նայոց քահանայի:

1990 թ. հովվի օգնական է նշանակվել Մոսուլի (Իրաք) Ս. Աստվածածին հայոց եկեղեցում:

1990 թ., ձեռամբ Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Ասապուրյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1991-1992 թթ. այցելու հովիվ է եղել Նյու Յորքի Ս. Իսաչ եկեղեցում:

1992-1993 թթ. եղել է Նյու Յորքի Ս. Վարդան Մայր քահանայի լուսարարապետ:

1993-1999 թթ. եղել է Նյու Ջերսիի Սրբոց Ղևոնդյանց հայոց եկեղեցու հոգևոր հովիվը:

1994 թ., պաշտպանելով վարդապետական թեզ «Ներածական Աստվածաշնչի հայերեն թարգմանության», ձեռամբ ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճաններ:

1999-2000 թթ. եղել է Նյու Յորքի Ս. Ներսես ճեմարանի տեսուչ:

2000 թվականից հոգևոր հովիվն է Նյու Յորքի Սրբոց Նահապակաց եկեղեցու:

2006 թ. հունվարի 28-ին ծայրագույն վարդապետության աստիճան է ստացել ձեռամբ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի:

Նեղինակ է մեկ փասնյակից ավելի աստվածաբանական և եկեղեցագիտական աշխատանքների: